

Ամերիկայի Արևելեան թեմէն ներս

Տ. ՎԻԳԷՆ ԵՊՍ. ԱՅԳԱԶԵԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՎ ԸՆՏՐՈՒԵՅԱԲ

ԱՄՆ Եկեղեցիներու Ազգային Խորհուրդը իր Պարզամատրական Ընդհանուր Ժողովի ընթացքին, Նոյեմբեր 10, միաձայնութեամբ Նայասարանեայց Եկեղեցոյ Նիսիսային Ամերիկայի Արևելեան թեմի թեմական պատուիրակ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեանը Խորհուրդի նախագահ ընտրեց:

Նորընտիր նախագահը իր շնորհակալութեան խօսքին մէջ ըսաւ. «Մեծապէս երախտապարտ եմ ինծի վստահուած այս պատենիութեան համար. յոյս ունիմ որ համեստաբար ոչ միայն Նայ Եկեղեցին՝ այլ բոլոր Եկեղեցիներն ու յարանուանութիւնները պիտի ներկայացնեն: Ուրախառիթ երեւոյթ է որ այս Եկեղեցիները վերահասու են թէ Նայ Եկեղեցին իրապէս առաջնորդողի դեր ունի միջեկեղեցական շարժումին մէջ»:

Որպէս ընտրուած նախագահ՝ Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան իր պաշտօնին պիտի ձեռնարկէ երկու փարի ետք՝ երբ ներկայ նախագահը Տ. Մայքըլ Լիվինկսթըն պիտի աւարտէ իր շրջանը:

Վիգէն Սրբազանի ընտրութեան անդրադառնալով՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան ըսաւ. «Այս ընտրութիւնը խորհրդանշին է Ամերիկայի մէջ Նայ Եկեղեցոյ գրաւած դիրքին: Ի Բրիսպոս մեր եղբայրներն ու քոյրերը գիտեն Նայոց պարմութիւնը եւ գիտեն նաեւ թէ մենք զօրաւոր եւ քրիստոնէական խոր արմատներ ունեցող Եկեղեցի մըն ենք: Եւ ահա, մեզի կը վստահին առաջնագոյն ազգային միջեկեղեցական մարմնի մը ապագան»:

Աւելի քան 400 պարզամատրներ մասնակցեցան Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի Ժողովին, որ գումարուեցաւ Նոյեմբեր 8-10 օրերուն՝ Մերիլէնսի Նանթ Վալի շրջանին մէջ: Արևելեան թեմը կը ներկայացնէին Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան, Ուինվուրի (Փէնսիլվէնիա) Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Նոզշ. Տ. Նայկազուն ծ. վրդ. Նաճարեան, Շիգակոյի (Իլլինոյ) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Նոզշ. Տ. Առէն արք. Ճէպէճեան եւ երեցկին Արփի Գուգուեան (Գէյմպրիճի - Մասսաչուսէց - Ս. Երրորդութիւն եկեղեցիէն): Իսկ Արեւմտեան թեմը կը ներկայացնէր Արժշ. Տ. Վարդան ա. քինյ. Գասպարեան:

Պարզամատրական այս ժողովի ընթացքին, ի մէջ այլոց, ներկայացուեցան Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի զանազան բաժանմունքներու եւ Եկեղեցոյ Նամաշխարհային Ծառայութեան (Խորհուրդի միջազգային մարդասիրական օգնութեան կազմակերպութիւն) արեւելագիրները, որոնք առնչութիւն ունէին Միացեալ Նահանգները հարուածող փոթորիկներու, Փաքիստանի երկրաշարժին եւ Ափրիկէի մէջ յառաջ տարուող օգնութեան աշխատանքներուն:

Ժողովի առաջին երեկոյին՝ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու պապ-
գամաւորներ հանդիպում ունեցան եւ խորհրդակցեցան յիշեալ Եկեղեցիներ յուզող կարգ մը
հարցերու մասին:

Արեւելեան թեմի թեմական պապուիրակ եւ Միջեկեղեցական յարաբերութեան վարիչ
նշանակուելէն ետք՝ զլիսաւորաբար Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեանի եւ նաեւ թեմական
պապուիրակի Յանձնախումբի ջանքերուն շնորհիւ Նայասարանայց Եկեղեցին կարեւոր
ներկայութիւն մը դարձած է ԱՄՆ միջեկեղեցական կազմակերպութիւններուն եւ այլ հաս-
տատութիւններու մօտ: Այս առաջնորդութիւնն ու յանձնառութիւնը կը զօրացնէ Նայասարան-
այց Եկեղեցին Ամերիկայի միջեկեղեցական եւ քաղաքական համայնքներու մօտ՝ եւ որմէ
մեծ օգուտ կը քաղեն նաեւ Նայասարանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ